

ՀՏԴ 891. 981.0/07/

Գրականագիտություն

«ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ» ԵՎ ՅԵՂԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ արիապաշտություն, քրիստոսամեթ, հեթանոսապաշտ, գաղափարական դարձ, հավաքական զգացմունք, ազգային կեցություն, ցեղային վերադաստիարակություն, մտավոր-քաղաքական շարժում, սպառնազինություն, հեթանոս իմաստասիրություն, գեղագիտական կողմնորոշում:

Ключевые слова: поклонение силе, атеист, язычник, идеологический ход, единое чувство, национальное сознание, племенное перевоспитание, (идеологическое-военное) движение, доспехи, языческая философия, эстетическая ориентация.

Keywords: worship of force, atheist, pagan, ideological move, one sense, national self-consciousness, tribal rehabilitation, intellectual and military movement, armor, pagan philosophy, aesthetic orientation

Н. Аванесян

«Сердце племени» и племенная религия

Эта статья посвящена поэзии Д. Варужана и идеологии Г. Нжде, в частности внутренней связи "Сердца племени" и племенной религии. В начале XX века в западноармянской поэзии поднимается проблема племенного самосознания, (переутверждение) племенных ценностей. Идеология Нжде - вооружить зарубежных армян нравственностью племенной религии и собрать их в единой силе - была значительным явлением в национальной жизни и исторически имела свои основы в западноармянской поэзии начала XX века. Идея племенного перевоспитания народа стала идеологией национального бытия. "Сердце племени" и племенная религия несколько национальны, настолько же являются всечеловеческой исключительной идеологией в общей иерархии культурных ценностей.

N. Hovhannisyan

"Heart of the Nation" and National Religion.

The article is dedicated the poetry of Daniel Varouzhan and the ideology of Garegin Nzhdeh, particularly to the internal link between "Heart of the National" and national religion.

In the beginning of the XXth century the idea of the unification of the national self-consciousness and national worshipping raises in the western Armenian poetry. Nzhdeh's ideology to unify and empower the Armenian Diaspora with moral national religion in the national life of the XX century was a significant event and it had its basis in the western Armenian poetry.

The idea to re-inspire the nation by the concepts of the national religion became the ideology of the national way of living.

«The Heart of the Nation» and the concept of the national religion are considered to be national as well as all-human absolute ideology in the hierarchy of common cultural values.

Հոդվածը վերաբերում է Դ. Վարուժանի պոեզիայի և Գ. Նժդեհի Յեղակրոնության գաղափարաբանությանը: Յեղակրոնության բարոյականով սփյուռքահայությանը սպառնազինելու և հավաքական ուժ դարձնելու Նժդեհի գաղափարական շարժումը նշանակալի երևույթ էր ազգային կյանքում և պատմականորեն իր նախահիմքերն ուներ արևմտահայ, մասնավորապես Վարուժանի և Սիամանյոյի պոեզիայի գաղափարաբանության մեջ: 20-րդ դարասկզբի արևմտահայ պոեզիայում բարձրանում է ցեղային ինքնագիտակցության խնդիրը, ցեղային գլխավոր պաշտամունքների վերարմատավորման մտայնությունը: Յեղակրոնությունն ու «Յեղին սիրտը» որքան ազգային, նույնքան համամարդկային բացառիկ գաղափարաբանություն են մշակույթի համաշխարհային արժեհամակարգում:

Այս կամ այն ժողովրդի ուժակշիռն ու դիմագիծը պատմականորեն ձևավորող նախադրյալներ են ցեղային նկարագիրն ու գաղափարաբանությունը: 20-րդ դարասկզբի արևմտահայ պոեզիայում բարձրանում է ցեղային ինքնագիտակցության խնդիրը, ցեղային գլխավոր պաշտամունքների վերարմատավորման մտայնությունը: Նախաքրիստոնեական արմատներին գաղափարական դարձի հակումը պայմանավորված էր նախ և առաջ ազգային ողբերգությունների քաղաքական ընթացքով: Վարուժանի պոեզիան՝ «Յեղին սիրտը» հավաքական պաշտամունքի խորհրդանիշով, դարձավ գաղափարական այդ մտայնության կենտրոնաձիգ առանցքը:

Բանաձևելով հայ հայրենասիրական, մասնավորապես Վարուժանի պոեզիայի ներքին բնույթը՝ Պ. Սևակը գրում է. «Հայրենասիրությունը հայ գրողի մոտ հանդես է գալիս ոչ որպես սոսկական մի զգա-

ցում, այլ որպես աշխարհայացք, որպես գաղափարախոսություն: Եվ, հիրավի, պատմական անցյալին, կոնկրետ դեպքում հեթանոսական դարերին անցնելու փաստը Վարուժանի մոտ հանդես է գալիս իբրև ամբողջական աշխարհայացք»¹:

«Յնդին սիրտը» սոսկ ցնդային հավաքական զգացմունք չի ուղենշում, այլև արմատներին դարձ խորհրդանշող արիական պաշտամունք: 1908թ. Ա. Չոպանյանին հղած մի նամակում Վարուժանը խոստովանում է. «Հեթանոս կյանքը օրնօր զիս կը գրավն. եթե այսօր կարելի ըլլար՝ կրոնքս կը փոխնի և սիրով կ'ընդգրկնի բանաստեղծական հեթանոսությունը»²: Յնդային ոգին՝ արիական իմաստասիրությանը, դառնում է Վարուժանի ստեղծագործության՝ ներքին ենթաշերտից բխող աշխարհայացքը:

1932թ. Սոֆիայում լույս տեսան ցնդային շարժում սկզբնավորող Գ. Նժդեհի «Յնդի ոգու շարժը» և «Յնդակրոնությունն իբրև հաղթանակի գործույթ» որքան գաղափարական, նույնքան էլ գործնական տեսությունները: Շարժման գաղափարաբանության վերաբերյալ 1933թ. Բոստոնում Նժդեհը հռչակում է «Յնդային արթնություն» խորագրով գաղափարախոսությունը՝ սկիզբ դնելով Յնդակրոն Ուխտերին: Ավելի ուշ՝ 1935թ., Սոֆիայում Նժդեհի կողմից հրատարակվում է ևս մի աշխատություն՝ «Ամերիկահայությունը- Յնդը և իր տակաճը»: Ժամանակակցի վկայությամբ՝ Նժդեհը «Ամերիկայի մեկ ծայրեն մյուսը էլեկտրականացուց մթնոլորտը իր կոռ բանախոսություններով, անկեղծ ու անվախ արտահայտություններով և անվիճելի փաստերով»³: Մտավոր-ռազմական հանճարի գաղափարա-կազմակերպական առաջնորդությամբ Յնդակրոն շարժումը միանգամից հզորանում է ԱՄՆ-ում և Բուլղարիայում՝ համախմբելով գաղութահայ բազմահազար խանդավառ երիտասարդների: Յնդակրոնության բարոյականով սփյուռքահայությանը սպառազինելու և հավաքական ուժ դարձնելու Նժդեհի գաղափարական շարժումը նշանակալի երևույթ էր ազգային կյանքում և պատմականորեն իր նախահիմքերն ուներ արդեն 20-րդ դարասկզբի արևմտահայ, մասնավորապես Վարուժանի և Սիամանթոյի պոեզիայի գաղափարաբանության մեջ: Ռազմի և բանաստեղծության հանճարները իրարից անկախ հաղորդակցվում էին ցնդային հավատամքով. ռազմի արվեստը և բանաստեղծության արվեստը՝ գեղեցիկն ու կոռովը, հետամուտ էին նույն դավանանքին: Ժողովրդին ցնդորեն վերադաստիարակելու գաղափարը ազգային կենցության գաղափարախոսություն էր այլևս:

Յնդային արիական վարքի, ստեղծագործ երևակայության տիպական պատկեր է հայոց դիցաբանությունը՝ խորհրդանշել աստվածություններով: Մեր տոհմիկ բանահյուսությունը ևս այլ բան չէ, քան ցնդի մտաբարոյական աշխարհի արտապատկերը: Նախաքրիստոնյա հայության հոգեգիծը պատմականորեն ձևավորած հեթանոս իմաստասիրության սկզբունքներից արիապաշտությունն ու սպառազինությունը ցնդի հռչակը բարձրացրել են աշխարհակալ ուժի գործության: Աստվածների՝ որպես գերբնական ուժերի առանձնացումով հանդերձ՝ ցնդային հանճարը նրանց ընդհանրացրել-միավորել է մի առաքինությամբ՝ արիության հատկանիշով օժտելով բոլոր աստվածներին ու աստվածուհիներին: Հատկանշական է, որ աշխարհը կառավարող գերագույն ուժը նախնական իմաստնությունը համարել է ռազմի և արիության ուժը: Այսպես, ուրարտական իմաստնությունը գերագույն աստվածություն է հռչակել ռազմի աստծուն՝ Խալդին՝ պատկերելով առյուծի վրա. նրան ենթադասվում էին որոտի, փոթորկի և արևի գլխավոր աստվածները: Ավելի ուշ արարադյան ցնդի գերագույն պաշտամունքը՝ ռազմի, արիության, հաղթանակի և անկախության գաղափարը, խորհրդանշում է Հայկ աստված- նահապետը, որի կողքին է Անգեղյա Տորքը: Արդեն զարգացած տոհմային կարգ ունեցող հայ ցնդը նախակառավարող դիցաբանում իր հոգեգիծը համարում է, և ուժի ու կյանքի հաղթանակի՝ ռազմի և արևի աստվածներին լրացնում են այլ պաշտամունքներ՝ ամբողջացնելով ցնդի հոգևոր կենսական արտապատկերը: Գերագույն աստված Արամազդը կոչվել է մեծ և արի, կայծակնացայտ, երկրի, երկնքի և մյուս աստվածների արարիչը: Ռազմի, քաջության, հաղթանակի, ամպրոպի և արևի աստված Վահագնը պատկերվել է խաբոյաշ պատանեկիկի կերպարանքով, կոչվել է վիշապաքաղ՝ տիեզերքը կործանող վիշապներին հաղթելու համար: Աշխարհը կառավարող ուժի խորհրդանիշն էր Վահագնը, որի հանդեպ պաշտամունքն առավել ուժգին էր: Կրակի և լույսի աստված Միհրը պատկերվել է խիզալս

¹ Պարույր Սևակ, *Երկերի ժողովածու 6 հատորով*, հ.6, Ե., 1976, էջ 327:

² Դանիել Վարուժան, *Երկերի լիակատար ժողովածու 3 հատորով*, հ.3, Ե., 1987, էջ 364:

³ «Հայրենիք», Բոստոն, 1963, 13 սեպտեմբերի, էջ 2:

պատանու կերպարանքով, հսկա ցուլին տապալելիս: Սիրո, գեղեցկության աստվածուհի Աստղիկը՝ Վահագնի հարսնացուն, պատկերվել է չքնաղ կնոջ տնքով, ամոթխած, Եփրատի ջրերում լողանալիս, Վահագնի հետ սիրո հանդիպումներով: Ուժի և գեղեցկության սիրո պատկեր-խորհրդանշով նաև կենտրոնացվել է հեթանոս կենսահայացքի ներքին տարողությունը: Ռազմի և պտղաբերության աստվածուհի Անահիտը կոչվել է Արամագդի դուստր, ոսկեմայր, ոսկեծղի, ոսկեմատն. համարվել է առաքինությունների մայր, ցեղի փառքն ու կենսարար ուժը. պատկերվել է երեխան գրկին հայուհու կերպարանքով: «Երևակայում և օրհնում եմ քաջությունը հեթանոս հայի, որպես տղամարդու բարձր հատկություն,- գրում է Նժդեհը: -Նախաքրիստոնեական հայության մոտ այն աստիճան զարգացած էին քաջությունն ու իր պաշտամունքը, որ Վահագն արքան ժողովրդի կողմից արձանացած է հեթանոս երգերի մեջ, որպես գերբնական ծնունդ «երկնի, երկրի և ծիրանի ծովի»¹:

Խոյանքներով բարձրացող ցեղի ոգին Վահագն էր՝ իր վիշապաբաղ վարքով: Աստվածներին վերապահված վարքը ցեղային վարքն է, և աստվածները նաև ցեղի կերտած գաղափարատիպերն են: Քրիստոնեությունը պատմականորեն վերափոխեց հայության հոգեկառուցվածքն ու մտահայեցումը. քրիստոսի ճակատագիրը մի ներքին օրինաչափությամբ դարձավ մեր ժողովրդի ազգային ճակատագիրը, որ անընդհատ խաչվել ու վերածնվել է տասնյոթ դարյա խաչապաշտ ճանապարհին: «Վահագնի հետ պիտի խոսենք հիմա - աստվածը հին արիական հայության: Մի նոր գիրք պիտի դրվի մեր ժողովուրդի ձեռքը- Ավետարանը արիների»²:

Հեթանոս դարերի պատմության և գաղափարաբանության վերաիմաստավորումը Վարուժանի պոեզիայում առավել խտացած է «Հեթանոս երգեր» ժողովածուում: «Յեղին սիրտը» շարքի հեթանոսապաշտությունը այստեղ կոնկրետանում է, ընդարձակում իր գեղագիտական ընդգրկումները՝ ցեղային ոգին մարմնավորելով համապատկերային կարգով: Ուղենշային է բնաբանը. «Ես կ' երգեմ Գինին-Բագիններուն ծիծաղը և խորաններուն արյունը: Դարերու Լյանքը կ' երգեմ, հանուն հաճույքի և տառապանքի գեղեցկության»: Ուժի և գեղեցկության պատկառանքը Վարուժանի պոեզիայում գերզգացված պաշտամունքից գեղագիտական հստակ կողմնորոշում էր կանխագծում: 1908թ. Ա. Չոպանյանին գրում է. ««Անահիտը» իր ծրագրով անհրաժեշտ է մեր մտային զարգացման մեջ... Ոչ միայն մեր, այլև ամբողջ մարդկության դյուցազնական դարերուն «nostalgie»-ն ունեմ: Ե՞րբ պիտի դառնա հեթանոսությունը և հին հաղթությունները, զոր վաստակելու համար հերոսներ պետք էին՝ այլ ո՛չ դիվանագիտություն»³: Ծարունակության մեջ Վարուժանը նշում է, թե «առաջին հեղեղ մը կայ ներսս, որ մինչ ցարդ հայրենիքի դիակներով թմբված էր: Լարերս փոխելու վրա եմ: Ձեր աշխատակից քուրմերուն հետ ես ալ պիտի գամ «Անահիտի» բազնին վրա զոհ բերելու՝ սիրտս»⁴: Ինքնագոհաբերության հեռապատկերն առկա է նաև «Հեթանոս երգեր» բանաստեղծական մեհյանը բացող «Գեղեցկության արձանին» քերթվածքում. «Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարզ, //Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթովիլ...»:

«Հեթանոս երգեր» գիրքը կրթոտ քննադատությունների տեղիք տվեց արևմտահայ գրական հատվածում: Կ. Պոլսում 1913թ. կազմակերպված գրական ասուլիսների նյութերը հրատարակվեցին առանձին գրքով: Վարուժանի պերճաշուք արվեստի մեծության գնահատումներին զուգահեռ՝ հրատարակվեցին հարձակողական բնույթի գրախոսություններ: Հայ կաթողիկե պատրիարքարանի շաբաթաթերթի հարվածներին ի պատասխան՝ ուշագրավ էր Ե. Օտյանի «Ռոտեն կգայթակղի» պամֆլետը. «Եթե Դ. Վարուժան իր նուր բաժակը փոխանակ դնպի Անահիտի ծիծերը բարձրացնելու, Սուրբ Մարիամին ծիծերուն բարձրացնել, թերևս «Կաթողիկե Արձագանքի» հոգվածագիրը առաջարկեր այդ տողերը եկեղեցիներուն մեջ կարդալու, ինչպես Երգ երգոցը, որուն մեջ ալ փառաբանված ծիծեր կան»⁵: Քրիստոնեական առաքինության դիտակետից հեթանոսամերժ գնահատումներ հնչեցին նաև արևելահայ որոշ քննադատների կողմից:

¹ Նույն տեղում, էջ 110:

² Նույն տեղում, էջ 68:

³ Դանիել Վարուժան, հ. 3, էջ 386:

⁴ Նույն տեղում, էջ 386:

⁵ Երվանդ Օտյան, Երկեր, Ե., 1956, էջ 745:

«Գեղեցկության արձանին» քերթվածքը՝ «բյուրեղացած իմ արյունովս» (Դ. Վարուժան), գեղեցիկի փառաբանության սկզբնաղբյուրն է, որից ծավալվում է շարքի գեղարվեստաբանությունը և արժանավայել վերջավորվում «Հարճը» պոեմով.

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ' հոգվոյն պես՝

Եվ հեթանոս այդ մերկությանդ ներքև

Տառապի՝ մարդն ու չրկրնա դրպչիլ քեզ...

Մեռած աստվածներին վերածնելու գաղափարագեղարվեստական մտայնությամբ նշանավորվող Վարուժանի պոեզիայում առանձնադիտելի է Անահիտի հանդեպ պաշտամունքը՝ որպես կենսարար գեղեցկության և ուժի աստվածուհու: Առավելապես աստվածուհիապաշտ բանաստեղծ է Վարուժանը, որի հիմքը կյանքից սկզբնավորվող բանաստեղծական սերն է: Գեղեցկությունն ու կորովը, առհասարակ, Վարուժանի արվեստի ելակետն ու չափանիշն են, կյանքի հաղթանակի հիմքը: Գողթան հին երգարվեստի կատարյալ նմուշներից մեկի՝ օտարության մեջ հանգչող հայոց արքայի վերջին ասքի՝ «Ո՛ տայր ինձ գծուխ ծխանի»-ի ոգով ու ոճով Վարուժանը բանաստեղծում է հեթանոսաբաղձ իր հոգու ձոնը՝ ուղղված «ոսկեմայր դիցուհուն».

Ո՛վ ինձ կու տար Ամանորի հրճվանքն հին

Նավասարդի մարգարտավառ ջինջ առտուն,

Սույրն եղջերվոց, վազելն ազատ եզներուն.

Ո՛վ ինձ կու տար հանդարտ ծուխը ծղխանին...

Ըզգաստության, իմաստության մայր, թույլ տուր

Ոգել պարծանքդ՝ հոգվոյս խանդովն երկնատուր,

Եվ քրնարիս բյուր լարերը թող թընդա՛ն...

Գեղագիտական որոնումների ոգեղեն ճանապարհին արվեստի նորահայտ գեղարվեստաբանության փառահեղ հիմներգ է «Նավասարդյան» քերթվածքը՝ գրված «Նավասարդ» տարեգրքի հղացման օրերին: Հեթանոսական կամ անցյալապաշտ շարժման գաղափարագեղարվեստական այդ խտացումով էր մեկնարկվում Վարուժանի նախաձեռնած տարեգրքը՝ նոր երևույթ նախանշելով արևմտահայ գեղարվեստի պատմության մեջ: Արևմտահայ գրական կյանքում սկզբնավորված հեթանոսական գաղափարագեղարվեստական շարժման կշիռը բարձրանում էր՝ հրապարակում ունենալով ոչ միայն Վարուժանի «Հեթանոս երգերը», այլև Ծանթի «Հին աստվածները»:

Վարուժանի «Նավասարդյան» քերթվածքը՝ իր՝ գեղարվեստի տեսության ուղեծիր նախանշող գաղափարներով, ինչպես վկայում է Հ. Սիրունին, դարձավ իրենց՝ նավասարդականների հեթանոսապաշտ շարժման հանգանակը: Ամենայն հավանականությամբ, Վարուժանի սկզբնավորած հեթանոսական գաղափարաբանության արգասիք էին նաև 1913-ին արևմտահայ հոգևոր-մշակութային կյանքում կազմակերպված նավասարդյան տոները: Ինչպես հայտնի է, Նավասարդը հին հայկական տոմարի առաջին ամիսն է՝ կապված նավասարդին Հայկի՝ Բեյին նետահարելու, ցեղի անկախությունը հռչակելու, Արարադ երկիրը հիմնադրելու իրողության հետ: «Նոր Արշալույսի» նավասարդյան կերտման սկզբունքով, հանուն «Ույժին, Գեղին, Սերին, Սերմին», Վարուժանը ձոններգում է.

Հանճարդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն

Արևափառ՝

Ա՛լ վերածնե փլատակներեն, և փառագոչ

Քրնարդդ առ:

Հանո՛ւն Ույժին, հանո՛ւն Գեղին, մըտիք մեհյանն

Աստվածներուն...

Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Յեղիդ

Մարմարեն կույս,

Մենք, Զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք

Նո՛ր Արշալույս...

«Նավասարդ» տարեգրքի հղացմանը զուգահեռ, որի հաջորդ հրատարակությունը չկայացավ առաջին աշխարհամարտի պատճառով, Վարուժանը 1914թ. Կ. Զարյանի հետ հիմնում է նախապես հեթա-

նոսական միտում ուրվագծող, «Նավասարդի» գեղագիտական որոնումներին հետամուտ «Մեհյան» ամսագիրը: Բայց մեհենականները շուտով հստակեցնում են գեղագիտական տեսության իրենց ուղղվածությունը՝ «Մենք հեթանոսներ չենք»՝ հռչակելով արվեստի զարգացումը ապագայապաշտությամբ մշակելու նորամտ ծրագիր: Անցյալապաշտ վարուժանը հեռանում է ապագայամետ «Մեհյանից»՝ գեղարվեստի տեսության զարգացումը ուղղորդելով հեթանոսակողմ ծիրով: Գեղարվեստագիտական զարգացման տեսական տարակարծություններով ու ներքին բախումով հանդերձ՝ «Նավասարդն» ու «Մեհյանը» գրապատմական առանցքային երևույթ էին ժամանակի գեղագիտական որոնումների համակարգում, նշանակալի դեր ունեցան արևմտահայ ստեղծագործ ուժերն համախմբելու, գրական ընթացքն նպատակաուղղելու, գեղարվեստական զարգացման ուղեգծերն ու գաղափարագեղագիտական ըմբռնումները վերանորոգելու գործում՝ կենդանի պահելով արևմտահայ գրական կենսոլորտը:

Մեհենականները իրենց ծրագրային կանխագծումներում նախանշում էին ելակետային մի դրույթ, որով հատկանշվում էր նաև «Նավասարդը». «Պաշտամունք և արտահայտություն հայ հոգվույն»։ «Հայ հոգին գոյ է: Պետք է բեկանել դատակնիքը, որ զԱյն լուռության դատապարտած է: Առանց Հայ Հոգվույն, չկա հայ գրականություն և հայ արվեստ: Ամեն ճշմարիտ արվեստագետ՝ իր ցեղին հոգին միայն կարտահայտե»¹: Յեղի կերպն ու դիմագիծը վերագտնելու, ցեղային ոգուն հաղորդակցվելու, ինքնաստեղծությամբ ցեղորեն գործնալու խնդիրն է գրականությանը առաջադրում ցեղակրոնությունը և՛ ազգային զարգացման գրական ընթացքը նախանշելով «ցեղայնացումից համամարդկայնացում»։ «Անարժեք է գրականությունը- «ազգի առաջապահը» չէ նա - եթե ցեղի ոգու ինքնարտահայտությունը չէ, եթե նրա մեջ ցեղի ոգին չի ճառագայթում: Եթե մեծ թևաբախումներ ունի ժողովուրդը, ասել է՝ ցեղաշունչ է նրա գրականությունը, դա նշան է, որ նրա մեջ ցեղն է գործում»²:

Ազգային քաղաքական ճակատագրում Նժդեհը կարևորում է երեք նախապայման՝ դաստիարակություն, արտաքին քաղաքականություն և ռազմավարություն: Առաջինը, կրթելով ազգի ներքին ուժը, կատարելագործում է նրան, իսկ երկրորդն ու երրորդը հնարավորություն են ընձեռում՝ իմաստնորեն օգտվելու այդ ուժից: Ըստ Նժդեհի՝ ազգը չի կարող գորավոր ու վճռական լինել, եթե չունի իր ներքին ուժի գիտակցությունը: «Որքան տիրական է ցեղի ազդեցությունը ժողովուրդի կյանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանվում վերջինս... Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարեներ: Միշտ էլ նահանջելու տրամադիր գինվորն է ժողովուրդը. ցեղը միշտ էլ վահագն է»³:

Ինչու՞ «Յեղին սիրտ» կամ ցեղակրոնություն. ի՞նչ է ցեղը, ի՞նչ ձևաչափով տարբերակել «ցեղ» հասկացությունը: Մի կողմ թողնելով երևույթի հասարակագիտական բնորոշումները, որոնք, ըստ էության, տարբերակված մոտեցում չեն պարունակում, դառնանք Նժդեհին. «Յեղը՝ դիմագծորեն ազգայինն է, այն տիպականը, որով ժողովուրդները տարբերվում են իրարից... Յեղն ավելի հոգի է, քան կավ»⁴: Յեղի ոգու պեղումը, ժողովրդին ցեղորեն վերադաստիարակելու, ցեղի կերպը գրականությամբ ներկայացնելու հարցադրումները 20-րդ դարում ազգային գոյության նշանակության աստիճանի պահանջված էին:

«Հայ Հոգին» դաբեմված մթին ու մեծաշուք պատկերներով լի անցյալն մը... մեր օրերուն կը թվի ըլլալ հրաշք մը, որուն խորհուրդները պետք է արտաբերել,- առաջադրում էին մեհենականները: -Հայ Հոգին իմացական տիեզերքին մեջ տարր մըն է, որուն հայտնությունը պիտի զարմացնէ խորհող մարդկությունը: Պարզել այդ հոգին՝ էական պարտավորությունն է ամեն հայ արվեստագեղ»⁵: Յեղակրոնությունը նույնպես ընդգծում է ցեղի խորքը պեղելու, նրա հոգևոր գործունեականությունը կիրարկելու, ցեղաճանաչությամբ ցեղային ինքնագիտակցությունը բարձրացնելու, քրիստոնյա հոգեբանությունը վերանորոգելու ներքին ուղեգիծը: Նախաքրիստոնեական հայության դիմագիծը ուղղորդեց ցեղի ընթացքը՝ դառնալով նրա պատմության նախապատկերը: «Ժողովուրդների հոգևոր արդյունագործությունը այնքան մեծ է, որքան քյուրեղացած է նրանց ցեղային գիտակցությունը, որքան բացահայտված է նրանց ցեղային էությունը, հոգին: Հազար խորհուրդ ունի հայ հոգին, որ դեռ իր խանդավառ

¹ Դանիել վարուժան, հ. 3, էջ 210-211:

² Գարեգին Նժդեհ, էջ 388:

³ Նույն տեղում, էջ 390:

⁴ Նույն տեղում, էջ 316:

⁵ Դանիել վարուժան, հ. 3, էջ 210-211:

մարգարեին կը սպասեմ, որ պիտի հայտնվի մի օր և զայն բացահայտեմ մեզ: Հայությունը ցնդածանաչությամբ միայն կարելիություն պիտի ստանա իր էության չգիտակցված և չիմաստնավորված ուժերը լծելու մեր ցնդի վարած անհավասար գոյամարտի գործին»¹:

Գաղափարաբանական ընդհանրություններով հանդերձ՝ ցնդակրոնությունը չի նույնանում «Մեհյանին» կամ «Նավասարդին»: Յնդի փառահեղ անցյալի և ապագայի պաշտամունքին հետամուտ՝ ցնդակրոնը ցնդորեն ապրողն է՝ «ցնդի կյանքով, ցնդի վախճանաբանությամբ և ցնդի համար»։ «Անցյալի պաշտամունք չէ ցնդակրոնությունը... ոչ էլ մեղկ ապագայապաշտություն: Մեր փառաշատ անցյալի և ապագայի մեծ հույսի ստեղծագործ մեծ կենսակցությունն է դա, որից ժողովրդի հոգին իր ամենաշքեղ հղացումները կը առնե»²:

Հայ ցնդի հոգեզոհին առավել, քան մյուս ցնդերին, ի սկզբանե ներհատուկ է եղել համամարդկային շաղախը, և բարձր բարոյականի տեր ցնդի հանճարը պետք է ճշգրտելով նախանշեր համամարդկային գրականության զարգացման ուղեգիծը՝ «եվրոպականացումից ցնդայնացում» սկզբունքով: Յնդային արմատներին հատկանշական մարդկային բարձր առաքինությունների տիպական պատկեր է մեր հեթանոսական ամբողջ բանարվեստը: Գեղագիտական այդ դավանանքի գաղափարանիշն է Վարուժանի գրական ժառանգությունը ևս. «Մեր գրականության մեջ արվեստը հայ պետք է ըլլա, իսկ անոր հատակը կամ հիմը կազմող գաղափարը՝ համամարդկային: Ո՞վ է բանաստեղծը - սիրտը՝ Թորգոմյան, իմաստասերը - միտքը՝ համագգային»³: Համամարդկային գաղափարներ սահմանողն ու սրբաբորոք ցնդն է՝ իր նախնական տեսակով: Այլ կերպ ասած, համամարդկայնությունը ինքնաստեղծ, վերացական չափանիշների ամբողջություն չէ, այլ ցնդային վարքի առաքինությունների կոնկրետ համընդհանրացում: «Ժողովուրդների կուլտուրական արժեքը պետք է ճշտել համամարդկային այն գծերով, որ հատուկ են նրանց հոգևոր ստեղծագործության... Նման գծեր են տեսնում եմ հեթանոս հայության բանարվեստի մեջ... Վահագնա-Անահիտական Հայաստանում եմ տեսնում եմ այնպիսի հոգեզոհներ, առաքինություններ, որոնք պիտի բաղձալ մեր՝ որքան գոռոզ, այնքան հոգեպես աղքատ ու տմարդի դարաշրջանին»⁴: Վկայակոչելով ազգային բանահյուսության արժանավայել պատառիկներից մեկը՝ «Զեզ ասեմ, այր քաջ Արտաշես...», Նժդեհն ընդգծում է աշխարհակալ ցնդի կողմից իմաստավորված ռազմի բարոյական ուժը, որ հատկանշական է եղել ոչ միայն նրա հոգևոր մշակույթին, այլև՝ պատմությանը: Հեթանոս հայի կերպարի մարդկայնացուցիչ գաղափարներով պետք է «թթխմորել Արևելքի հոգևոր հացը», - գրում է Նժդեհը՝ գտնելով, որ «Հայկական լավագույնի-բարձր մարդկություն արտահայտող գողթան երգերի բովանդակված վեհ գաղափարների - վերարծարծումն, նրանց պրոպագանդը հայ մտավորականության կողմից ոչ միայն հայկական, հայրենասիրական, այլև՝ համամարդկային պարտականություն է»⁵:

Յնդային արմատների հոգևոր կյանքի ընդերքում պահված արժեքների հայտնաբերումը և՛ գրականության, և՛ ազգային գաղափարաբանության ուղղորդիչ խնդիրն: Արդիական լույսի տակ պեղել ու կիրարկել ցնդի ներքին արժեքամակարգը՝ ազգային կենցության նշանաբան հռչակելով, ժողովրդին տալ ինքնահիշողություն և ինքնաճանաչողություն, սերունդների պատմական շղթայում գերպարտականության ինքնագիտակցություն, հասու դարձնել նրան իր ներքին ուժին, պարզել նրա ոգու նախաստեղծ հասակը. այստեղ է ոչ միայն Նժդեհի, այլև Վարուժանի ազգային գաղափարախոսության ներքին կշիռը:

«Հայը միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին հաջողվում է, կովի ընթացքում, հավաքական սիրտ ստեղծել»⁶, - ասում է Նժդեհը: Վարուժանի գրական ժառանգությունը՝ մասնավորապես պոեզիան, ցնդի հավաքական սրտի խորհրդանիշն է, ցնդի դիմագիծը չկորցնելու, ցնդի ոգով սպառագինվելու, ցնդից սոսկ բնակչության չվերածվելու գաղափարաբանություն: «Ժողովուրդը հաշվետու

¹ Գարեգին Նժդեհ, էջ 393:

² Նույն տեղում, էջ 389:

³ Դանիել Վարուժան, հ. 3, էջ 260:

⁴ Գարեգին Նժդեհ, էջ 275:

⁵ Նույն տեղում, էջ 275:

⁶ Նույն տեղում, էջ 289:

ուղեղ է, ցնդը՝ սիրտ, որ անհաշիվ կերպով զոհաբերելի գիտնե՞լ¹, - ասում է ցնդակրոնությունը: «Ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցավերուս, գրեթե բռնի լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել Յնդին սիրտը, որուն բախտուններն կզգայի իմ մեջս, իմ սնփական արյունիս խորը: Հայությունը կուլար և կը մոնչեր իմ մեջս»², - գրում է Վարուժանը: Ժամանակակիցների կողմից Վարուժանը կոչվել է «Գրական ֆիդայի»: Ազատագրական պայքարի ժամանակ ֆիդայիները «Յնդին սիրտը» փամփուշտի հետ կրում էին նաև իրենց մախաղներում:

Առաջին հրատարակությունից սկսած՝ «Յնդին սիրտը» առանձնացավ ոչ միայն նշանաբանային խորագրով, այլև շարքի մուտք հանդիսացող «Ձոն»-ով: Բանաստեղծական փոքր չափի մեջ Վարուժանը ընդհանրացնում է ոչ միայն իր պոեզիայի համապատկերը, այլև գաղափարաբանում ազգային պատմության ողջ հոլովությունը: Բնաբանը՝ «Ընդ եղեգան փող բոց ելաներ»՝ խորենացու առասպելաբանությունից, խտացնում է ինչպես շարքի, այնպես էլ բանաստեղծի պոեզիայի գաղափարաբանությունը: Բանաստեղծական արվեստի կառուցվածքաբանության տեսանկյունից ևս «Ձոնը» առանձնահատուկ արժեք է.

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.

- Զեզի ընծա՛, իմ հայրենիք-

Սոսյաց անտառեն էի գայն կըտրեր...

- Զեզի ընծա՛, հին հայրենիք-

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.

Ընդ եղեգան փող լո՛յս ելաներ:

Եղեգնյա գրիչ, փառք, Սոսյաց անտառ, քուրմ եզրույթները հեթանոսապաշտ փառահեղ ցնդի վարուժանական պաշտամունքի խորհրդանիշ են՝ գաղափարաբանված անգյալի՝ «Ընդ եղեգան փող լոյս ելաներ» պատկերով: «Ժողովուրդը հայ հոգու մարտիրոս կողմն է, ցնդը՝ հերոսական, - ասում է ցնդակրոնությունը: - Ժողովուրդն ավելի մեռելներ է տալիս, ցնդը՝ դյուցազներ... Ժողովրդի մշտախառով տարերքն է ցնդը»³: Լույս, ողբ, սիրտ, ծուխ բանալի բառերով հատկանշվող փառքի ու տառապանքի պատմությունը պարտադրում է վերանորոգել հայ կյանքի գաղափարաբանությունը: Յնդից ժողովրդի վերածված հայությունը հոգեփոխվելով, հեթանոսորեն վերածնվելով կարող է հասնել ազգային իդեալին: Պայքարի խիզախումի, ոգու խոյանքի վահագնական կեցությունն է հայության գոյության ուղին: «Տակավին պաշտումով կվերաբերվիմ կոփողներուն հանդեպ»⁴, - գրում է Վարուժանը 1907-ին:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի,

- Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ-

Գրիչս եղավ անթրոց սրբերու հնոցի...

- Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ-

Եղեգնյա գրչով վրեժ երգեցի.

Ընդ եղեգան փող բոց ելաներ:

Յնդային ոգու վերաթթնացումի գեղագիտական կողմնորոշումով հատկանշվող Վարուժանի պոեզիայում առանցքային է ռազմի ուժակշիռը: Վարուժանի խոսքն այսպիսի դեպքերում, գեղարվեստական ուղեգծից փոքր-ինչ շեղվելով, վերածվում է համազգային ռազմի գաղափարաբանության: Համա-ժողովրդական դիմադրության վարուժանական գաղափարի դրսևորումներից է կոփի երթի հրավերը՝ ուղղված հայրուհուն.

Երթանք, երթանք, Հայուհի...

Երթանք արդար բախումին:

Անդի՛ն, անդի՛ն կը մորթեն

Կյանքն արտին մեջ, և գաղափարը՝ գանգին...

«Թուրքը դեռ ծանոթ չէ մեր ցնդի բազկի ուժին, - ասում է ցնդակրոնությունը: - Նա գործ է ունեցել մեր ժողովուրդի, բայց ոչ ցնդի հետ: Նրա զենքի հաջողությունը սնփական ուժի լիությունից չէր, այլ՝

¹ Նույն տեղում, էջ 385:

² Դանիել Վարուժան, հ. 3, էջ 464:

³ Գարեգին Նժդեհ, էջ 386:

⁴ Դանիել Վարուժան, հ. 3, էջ 330:

մեր ժողովրդի դիմադրության պակասից»¹: Յնդի աշյուծասիրտ հերոսների պաշտամունքի ինքնարտահայտություն է Վարուժանի «Հերոսները» քերթվածքը, որ եղեռնագոհ բանաստեղծի չարբագրված պատառիկներից է:

Անոնք ծընան լայնարգանդ և լանջագեղ մայրերն,
Ծըծեցին կաթ մ'որ ցեղին անմահության ավիշն էր:
...Իրենց մարմինն ըսպիտակ՝ դյուցազներու կաղապար
Զոր քանդակել կրնալու համար պիտի մ' ուզեի
Գեթ օր մ'ըլլալ ես Աստված....

Ազատության բացարձակ գաղափարի գյուտով նշանավորվում է «Արծիվներու կարավանը» քերթվածքը՝ ձևավորված հերոս նվիրյալներին. «Աստված իրենց գանգերուն մեջ կը բանտեն...»: Նաև այստեղից է սերում Վարուժանի պաշտամունքը առ Վահագնը, որ նույնն է թե՛ ուժապաշտությունը կամ արիապաշտությունը:

Ով դու Վահագն, ո՛վ աստվածն իմ հայրերուս,
Կ' աղոթեմ մ ես... կ' աղոթեմ մ...
Ուժի՛ն համար, կրոնքի՛ն համար բազուկիդ....

Ուժապաշտության գաղափարի սկզբունքին զինվորագրված Նժդեհը, շարունակելով Վարուժանի միտքը, գրում է. «Դու խաբված ես, ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնեական բարոյախոսության, որ շարունակում է մնալ որպես ներկ և շարք, որպես քող և դիմակ ուժեղների հոգու համար... Ուժեղինն է աշխարհը, հայրենիքը, ազատությունը և ամեն ինչ...»²: Վարուժանի պոեզիայում Հիսուսին՝ որպես մահվան փառքի խորհրդանիշի, դիմադարձ է կյանքի փառքի խորհրդանիշների՝ հեթանոս աստվածների պաշտամունքը: Քրիստոսի հոգևոր խաչի ճանապարհը Վարուժանը տիպականացնում է «Մատնված-տառապած-ապտակված-թըքնըված-մահապարտ-խաչված Հիսուս» պատկերով: «Մեռած աստվածներուն» քերթվածքում, ողբալով հին աստվածների մահը, բանաստեղծը գրում է.

Մեռա՛վ խորհուրդն. և Բնությունն է արյունե՛ր
Օրենքներու կարկինին սուր սրլաքով:
Ձանձրո՛ւյթը մնաց, պրճնըված փուշ պրսակով,
Մարդն է ինկած գարշապարին տակ հրակա
Խուլ Աստուծո մը հրեա...

Վերաիմաստավորելով արևելյան հին ճշմարտությունը՝ «Ինչ որ Աստվածն է, այն էլ իր ներկրագողներն են», Վարուժանը ազգային ողբերգությունների հիմքը հայտնաբերում է քրիստոնեական այս մտայնության մեջ. «Ես շա՛տ եմ սիրեր»: Վարուժանի քրիստոսամերժ աշխարհայացքի գեղագիտական արգասիք է «Գողգոթայի ծաղիկներ» շարքը՝ «Փա՛ռք սարբինային, Քրիստոս կը պատարագեն» հայեցակետային բնաբանով:

Ողորմությանդ սրտությունն
Հոն վարը, տես.- գյուղե՛ր, գյուղե՛ր և գյուղե՛ր
Կը հըրդեհվին, և բոցն իրենց կը հասնի
Արարատեն բարձրը և բա՛րձրը քեզմե...

Թե՛ Վարուժանի, թե՛ Նժդեհի գաղափարաբանության գերագույն պաշտամունքը հայրենիք-ցեղ բացարձակ արժեքն է. այստեղից նրանց աշխարհայացքային այլախոհությունը, արիապաշտ, քրիստոսամերժ գաղափարախոսությունը: «Պետք է կեղծ ու մոլար հայտարարել բոլոր կրոնները, բարոյականները, սկզբունքները, որոնք չեն դարբնում կուռ կամքեր, ուժեղ նկարագիրներ, արիներ, որոնց չգոյությունը ազգերին հաճախ է ստիպում դիմելու իրենց թշնամիների մեծահոգության»³, - ասում է Նժդեհը: «Զարդը» բանաստեղծության մեջ, ներբողելով հերոսների արիական վարքը, Վարուժանը գրում է. «Հայրենիքի Սերը վեհ // Կրոնքը կը՛լլա հազարավոր կրոնքներու...»:

¹ Նույն տեղում, էջ 390:

² Նույն տեղում, էջ 307:

³ Նույն տեղում, էջ 56:

«Ձոռապաշտ եմ ես,- ասում է ցեղակրոնությունը,- և ահա երկյուղածորեն կ'ոգնկոչեմ նրանց, որոնց պաշտամունքը հավիտենական է, որոնք աշուժացան իրենց նվիրումի մեջ, աստվածացան իրենց հոյակապ գաղափարականության մեջ - որոնք դյուցազնորեն իրենց արյունը շռայլեցին՝ մեր ցեղի գոյությունն ու պատիվը հավիտենականցնելու համար»¹: Վարուժանի պոեզիային ներհատուկ զոհապաշտությունը համահավասար է արիապաշտությանը. «Ես կը պաշտեմ Սուրդ արդար», - «Դյուցազնի մը սուրին» բանաստեղծության խտացումն հանդիսացող այս գաղափարի իմաստավորումն են «Հերոսները», «Արծիվներու կարավանը», այլ քերթվածքներ:

Եվ կ'երդնունք քեզ, ընկեր, կ'երդնունք որ այսօր
Մինչ հագար՝ վաղն աստղերու չափ պիտ ըլլանք.
Վաղը, այո.- երբ մենք՝ իբրև կարմիր փունջ՝
Շիրմիդ ոտքին մեկ ցիցի վրա նիզակենք
Գլուխը Յարին կամ Սուլթանին.- Բռնությունն.
Մեր որդիներն հա՛ղթ, զրվարթ,
Պիտի սնարիդ դրնեն վարդն պսակը ծանր
Ազատության: - Կ'երդնունք, ընկեր, կ'երդնունք քեզ...

«Մասիսը՝ հայոց ցեղայնության հրաքույրը- դեռ չէ շիջած,- ասում է ցեղակրոնությունը: -Նոր, մենք նոր ցեղաշարժերի կը սպասենք՝ մեր արյան մեջ զգալով ներկայությունը անցյալի և վաղվա հաղթական հայության»²:

Ցեղաշարժի հեղափոխական տարերքի և ապագայի անխառն պայծառատենության ինքնարտահայտություն է Վարուժանի «Ով դար, ով դար» բանաստեղծությունը. «Ով Դար, ով Դար, Ապագան՝ արփագունդի մը նըման՝// Արշալուսված արգանդեղ պիտի ելլե շողարձակ»: Ազգային ճակատագրի բանաձևումը Վարուժանի կողմից՝ «Հայը՝ լըքված դարերեն, բայց Հավերժեն ընտրված», - դիտվում է համամարդկային առանցքի շրջապտույտի մեջ.

Ասդին՝ արդեն ժուսական Մարգերուն վրա կ'որոտան
Հորավերները կռվին, և խոստումներն Երագին...
Պիտի Աշխարհը ելլե նորոգված ու գեղեցիկ
Եվ պիտ ըլլա արժանի Արևին շուրջ դառնալուն...

Ազատագրական պայքարի այս գիտակից լավատենության արգասիք է «Հացին երգը» շարքը, Վարուժանի հայրենական տեսիլքներից մեկը: Ազգային ողբերգական ճակատագրի ընդվզումին՝ «Թե՛ մինչև երբ իր արյամբ// Հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե», հաջորդում է պատմականորեն իմաստնացած այս դառը խոհը. «Աղվոր աղջիկ, ուրիշներու արցունքին// Գիտե՞ս թե՛ որչափ աշխարհս է անտարբեր»: Հայրենիքի դառը միայնության դրաման ողբերգականորեն ծավալվում է նաև «Ջարդը» բանաստեղծության մեջ.

Լաց, Հայաստան...
Զի հոն լվացին քեզ դատող
Պիղատոսներն իրենց ձեռքերն ու հոգին...

Ազգային ճակատագրի ողբերգությունից մասնավորվում է մարդկային ողբերգության հարցադրումը: Լյանքը՝ «Յեկին նետված սրբություն», մահվան ռոնացող քամի, տնակի մեջ միայնակ մեռնող բանվոր, պանդխտության թշվառություն և մարդկային կորուստներ, հայրենական կիսավեր օջախներ: «Լրելով կնիքը Հայաստանի բնության ու պատմության՝ հայ եմ ես,- ասում է Նժդեհը:- Մտածումներով և ապրումներով, սակայն, ես մարդ եմ, համամարդ: Ես ընկերն եմ անիրավածի, եղբայրը՝ հալածվողի, և զինակիցը՝ բևեռն բևեռ ավելի արդար աշխարհի համար մարտնչողների: Դավանանքս է- մարդկայնություն, ավելի մարդկայնություն»³:

Ցեղակրոնության գնահատության հարցում, անտեսելով ցեղայինից մարդկային գաղափարական ուղեգիծը, գրեթե միշտ շեշտը դրվում է նրա ազգային որակի վրա: Ցեղակրոնությունն ու «Ցեղին սիր-

¹ Նույն տեղում, էջ 396:

² Նույն տեղում, էջ 393:

³ Նույն տեղում, էջ 369:

տը» որքան ազգային, նույնքան համամարդկային բացառիկ գաղափարաբանություն են մշակույթի համաշխարհային արժեհամակարգում:

Գրականություն

1. Գաբրելին Նժդեհ, Հատընտիր, Ե., 2001:
2. Դանիել Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու 3 հատորով, հ.3, Ե., 1987:
3. Երվանդ Օսյան, Երկեր, Ե., 1956:
4. «Հայրենիք», Բոստոն, 1963:
5. Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Ե., 1976:

Տեղեկություններ հեղինակի մասին

Նարինե Հովհաննիսյան – բ.գ.թ., դոցենտ, հայ գրականության և լրագրության ամբիոն
E-mail: nare-luys@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս. Խանյանը: